

ԱՆՐԻ ԹՐՈՒԱՅԱ

Հ. Տ. ԳԱՍՊԱՐՅԱՆ*

Ֆրանսագիր մեծահռչակ վիպասան Անրի Թրուայան ծնվել է 1911 թ. նոյեմբերի 1-ին, Մոսկվայում, հարուստ առևտրականի ընտանիքում։ Նրա նախաձայրերը Կուրանի հին բնակիչներից էին, որոնք 1830-ական թվականներին դարձել էին ոռոսահայատակ։ Ուլգ ժամանակաշրջանում, — գրում է Թրուայան, — լեռներում ալյուղ հայերը մտան բրիտանյա ցարի հրամանի տակ։ Մահմեդական շերքեզների դեմ գործելով որպես ռազմիկներ, թարգմաններ և ուղեցույցներ, հայերն անգնահատելի ծառայություն մատուցեցին կայսերական բանակին։ Իբրև վարձատրություն, 1833-ին նրանց շնորհվեց ոռոսական քաղաքացիություն, և նրանք ստացան Արմավիրը կառուցելու և վարչականորեն կառավարելու իրավունքը։ Քաղաքի այդ ժամանակվա հայ բնակիչները ավելի լավ խոսում էին շերքեզերեն, քան ռուսերեն, հազնում էին շերքեզական զգեստ, Ալլահի անունով երգվում, բայց կանոնավորապես հաճախում եկեղեցի, որտեղ բրիտանական առաքինություններ էր քարոզում էջմիածնից հատուկ ուղարկված քահանան։

Անրի Թրուայայի պապերը Արմավիրում ապրող մյուս հայերի պես ոռոսականացրել են իրենց ազգանունը, և Թորոսյանը դարձել է Թարասով։ Ինքը՝ վիպասանը կոչվում է Լև Թարասով։

Անրի Թրուայային երեմյան մեղադրում են, որ իր հայկական ծագումը հրապարակավ չի հայտարարում ի լուր աշխարհի։ Եվ սակայն, «Աշխարհի տեղություն չափ» վերնագրով կենսագրական բնույթի վեպում նա իր հորը ներկայացնում է որպես զտարյուն հայ։ Մի՞թե դա գրավոր հայտարարություն չէ իր հայկական ծագման վերաբերյալ։

Քանի որ Թարասովները միջավայրի ու պայմանների բերմամբ ոռոսախոս են եղել, ապա Լևը ոռոսական կրթություն է ստացել ընտանեկան հարկի

* Հայկ Գասպարյանը ծնվել է 1912-ին, Սուդանում, ապրել տարբեր քաղաքներում՝ Նարթում, Ասմարա, Ադիս-Աբեբա, Լոնդոն։ 1949-ին հայրենադարձվել է Երևան, որտեղ բարձրագույն կրթություն ստանալուց հետո սկսելով մանկավարժությամբ է զբաղվել՝ դառավանդելով տեղիներեն, հետո դիտահետազոտական բնագավառին է նվիրվել։ Տիրապետելով ֆրանսերենին, նա ուսումնասիրում էր հայ-ֆրանսական դրական մշակութային կապերը։ Հ. Գասպարյանը դրել է ռազմաթիվ հետադուռական ակնարկներ, որոնք լույս են տեսել պարբերականներում։ Վաղուց ի վեր ընթերցողին ծանոթ է նրա «Վիկտոր Հյուգոյն հայ գրականության մեջ» մենագրությունը, որի համար հեղինակին շնորհվել է բանասիրական դիպլոմների թեկնածուի գիտական աստիճան։

1966-ից Հ. Գասպարյանը աշխատում էր ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում և հետազոտում ծաղումով հայ ֆրանսագիր հեղինակների գործերը։ Սույն հետադուռական հրապարակումը հետապնդում է երկու նպատակ՝ նախ ընթերցողին ծանոթացնել ֆրանսիական ակնառու դրողի գրական վաստակին և մյուս կողմից՝ պահելու հիշատակը մի ջանասեր մտավորականի (մահ. 1971 թ.), որը իրեն բանասեր-գրականագետ դեռ շատ անելիքներ ուներ։

տակ, կարգացել է ռուս նշանավոր գրողների գրքերը և հետագայում իր մի շարք վեպերում արտացոլել է ռուսական կյանքը: Ֆրանսահայ ժուռնալիստ Սերովբե Մխիթարյանի հետ 1968-ին ունեցած հարցազրույցի ժամանակ նա ասել է. «Ես իմ ստեղծագործություններում հաճախ եմ անդրադարձել ռուս ժողովրդին: Բայց դա հետևանքն է այն մշակույթի, որ ես ժառանգել եմ իմ ծնողներից: Եթե նրանք հայերեն իմանային և ինձ դաստիարակեին հայկական հոգեբանությամբ, ապա իմ ստեղծագործությունների բովանդակությունը տարբեր կլիներ»:

1920 թ. Թարասովների ընտանիքը տեղափոխվում է Փարիզ, որտեղ իննամյա Լևը սկսում է հաճախել ֆրանսիական լիցեյ: Ռուսաստանից նոր ժամանած պատանու համար ֆրանսերենը որևէ դժվարություն չի հարուցում. «Շնորհիվ շվեյցարացի դաստիարակչուհուս,—գրում է նա իր հուշերում,—Փարիզ ժամանելիս ես ֆրանսերենը խոսում էի նույնքան լավ, որքան ռուսերենը: Լիցեյում ես հեշտությամբ մտերմացա իմ հասակակից տղաներին: Սակայն օտար ծագումիս պատճառով ես ներքուստ ինձ տարբերում էի մյուսներից: Իմ յուրահատուկ ճակատագիրը ուրույն երանգներ էր դրոշմել բնավորությանս վրա, երանգներ, որոնցից ոչ կարող էի, ոչ էլ ուզում էի ազատվել»:

Լիցեյն ավարտելուց հետո Լև Թարասովը հետևում է իրավաբանական ինստիտուտի դասընթացին և ստանում օրենսգետի դիպլոմ: Ապա աշխատանքի է մտնում Սենա դեպարտամենտի պրեֆեկտուրում, իբրև խմբագիր: Ֆրանսահայատակ դառնալով, նա գնում է բանակ՝ զինվորական ծառայության: Այդ ժամանակաշրջանում գրում է «նաբուսիկ օրեր» վեպը, որ հրատարակում է 1935 թ., Անրի Թրուայա նոր անունով: Վեպն արժանանում է «Պոպուլիստ» գրական մրցանակին:

Զինվորական ծառայությունը վերջացնելով, Անրի Թրուայան պաշտոնավարում է իր նախկին հիմնարկի բյուջետային բաժանմունքում, ազատ ժամանակը տրամադրելով ստեղծագործական աշխատանքի: Երբ իր վեպերը սկսում են ընդունելություն գտնել և շոշափելի եկամուտ ապահովել, նա դուրս է դալիս պրեֆեկտուրից և ամբողջովին նվիրվում գրականությանը: Այնուհետև, նրա ստեղծագործական կյանքում յուրաքանչյուր գիրք հանդիսանում է հաջողության մի նոր նշանաձող: Նրա երկերը պսակվում են փառքի դափնիներով, արժանանում նորանոր գրական մրցանակների: 1959 թ. Անրի Թրուայան ընտրվում է ֆրանսիական ակադեմիայի անդամ և այդպիսով դառնում Ֆրանսիայի «քառասուն անմահներից» մեկը: Դա ամենաբացառիկ պատիվն է օտար ծագումով որևէ գրողի համար:

Անրի Թրուայան իր վաղ շրջանի վեպերում պատկերել է նեղ շրջանում ապրող փոքրաթիվ մարդկանց կոնֆլիկտները, որոնք պայմանավորված են մանր շահագրգռություններով: Թեև այդ շահագրգռությունները կրում են անձնական բնույթ, այնուամենայնիվ դրանք հանդես են գալիս իբրև դասակարգային շահերի արտահայտություն:

Նկատելի է, որ սեփականատիրական կարգերի հակասությունները սլաակերելով, հեղինակը դրանց վերացման համար հեռանկարներ չի գծում և բավարարվում է միայն փաստի արձանագրմամբ, բայց դրանով իսկ նա կարողանում է ընթերցողին բարձրացնել դասակարգային պայքարի գիտակցության աստիճանին: Բացասականի մերկացման ճանապարհով դրականի հաստատմանը հասնելու և այդպիսով ընթերցողի վրա հակազդելու այդ գեղարվեստական

հնարիր հեղինակի ունեւորական հատկանիշն է հանդիսացել 30—40-ական թվականներին:

«Խաբուսիկ օրեր», «Ձկների ավազանը», «Սարդը», «Մեռյալը իշխում է ողբին» վեպերում Անրի Թրուայան առավելապես ձգտում է բացահայտել սոցիալական երևույթների հոգեբանական անդրադարձումները, իր ուշագրությունը բերելով հերոսների ներքին աշխարհի գեղարվեստական արտացոլման խնդրին: Մարդկային հոգեբանության նուրբ իմացության շնորհիվ նա նկարչի վարպետությամբ վրձնում է իր հերոսների ներաշխարհում տեղի ունեցածը: Իսկ այն փաստը, որ նրա հերոսներն արտանկարված են կյանքից և ունեն իրենց նախատիպերը առավել լիարյուն, հավաստի ու համոզիչ է դարձնում նրանց կերպարները:

Ճվալ ժամանակաշրջանում Թրուայայի գրած վեպերի գլխավոր հերոսները մեծ մասամբ կա՛մ բացասական, կա՛մ անբնականոն մարդիկ են. նրանցից յուրաքանչյուրը մարմնավորում է բնավորության մի ընդգծված հատկանիշ, որը վիպական գործողության ընթացքում աստիճանաբար վերաճում է, երբեմն նույնիսկ վերածվելով պաթոլոգիական երևույթի: Այդ հերոսները մարդկային հասարակության մեջ կազմում են ոչ թե որոշակի մի խավ, այլ «աղճատված հոգիների» առանձնահատուկ մի տարատեսակ՝ ուրույն ընդհանրություններով ու ներքին հակասություններով:

«Խաբուսիկ օրեր» վեպի գլխավոր հերոս Գիյոմը երևակայամոլության այն դոհերից է, որոնց միտքն անվերջ թափառում է պատրանքների աշխարհում: Հարստության և փառքի տիրանալու մարմաշով նա երևակայությամբ կաուուցում է իսպանական շքեղ դղյակներ, որոնք իրականության հետ առաջին իսկ բախումից փլվում են հիմնահատակ: Բայց յուրաքանչյուր ձախողությունից հետո նա չվհատող համառությամբ հղանում է մեծադողորմ մի նոր ծրագիր, վարդագույն հեռանկարներով: Ի վերջո, երազանքը Գիյոմի համար դառնում է մտքի թմրագեղ, և ինքնախաբեության պահերին նա սկսում է երևակայական ընդունել իրականի տեղ: Գիյոմի ամբողջ գոթախտությունն այն է, որ նա չի ըմբռնում ժամանակակից կյանքի պայմաններն ու պահանջները, չի ընտրում իր միջակ կարողություններին համապատասխան աշխատանք, համառորեն ձգտում է դեպի անհասանելին: Եվ անխարիսխ լավատեսությունը դառնում է նրա կործանման պատճառը:

Կյանքի հետ դաժան առերեսումը «Ձկների ավազանը» վեպի գլխավոր հերոսին վարակում է ծուլության ախտով: Պատանի հասակում որը մնալով, Ֆիլիպը աշխատանքի է մտնում որպես կրտսեր գրագիր: Մանր աշխատանքի տաժանքը, շնչին աշխատավարձի պարտագրած զրկանքները, հիմնարկի տերերի անմարդկային վերաբերմունքը, սեփական ինքնասիրության անընդմեջ ոտնահարումը—այս ամենը դեռահաս Ֆիլիպի մեջ առաջացնում են մղձավանջային սարսափ աշխատանքի հանդեպ: Նրա աչքում աշխատանքն ստանում է ստրկության իմաստ: Նա սկսում է տենչալ անաշխատ կյանքի վայելքները: Եվ ի վերջո դառնում է ուրիշների հաշվին ապրող մի ձրիակեր:

Անրի Թրուայայի վաղ շրջանի ստեղծագործության գլուխգործոցը համարվում է «Սարդը» վեպը, որը 1938-ին արժանացել է գրական Գոնկուր մրցանակի: Գլխավոր հերոսը Ժերարն է, ֆիզիկապես վատառողջ մի երիտասարդ, որը մանուկ հասակից եղել է ընտանիքի միակ տղամարդը: Մայրը և երեք քույրերը շարունակ շրջապատել, փայփայել են նրան: Եվ դա Ժերարի համար

դարձել է անփոխարինելի անհրաժեշտություն: Նա տարօրինակ, հիվանդագին սիրով սիրում է քույրերին և չի կարող իր կյանքը պատկերացնել առանց նրանց: Նրանք պետք է միշտ իր շուրջը լինեն, փաղաքշեն իրեն, երբեք չհեռանան իրենից, երբեք չհետաքրքրվեն հասակակից երիտասարդներով:

Քույրերի նկատմամբ ժերարի տաժած զգացմունքը անձնասիրության արտահայտություն է: Ժերարը ի բնե ծայրաստիճան եսասեր է, և նրա եսասիրությունը մոլախոտի համառությամբ առիթ է փնտրում կառելու, սնունդ քաղելու որևէ կենսունակ իրականությունից: Քույրերի գուրգուրանքն է ստեղծել այդ առիթը, ու այնուհետև նա հոգեպես փաթաթվել է նրանց էությունը, ջանալով իր երջանկության ավիշը ծծել նրանց ամենօրյա ներկայությունից:

Սակայն կյանքը, ի վերջո, այլ կերպ է դասավորվում: Երկու երեք քույրերը իրար ետևից ամուսնանում են առանց ժերարի հավանության: Ժերարը դիվային ծրագիր է հղանում նրանց ընտանեկան կյանքը քայքայելու, ապահարզանի հանգեցնելու դիտավորությամբ: Բայց ապարդյուն: Երբ կրտսեր քույրն էլ պատրաստվում է ամուսնանալ, ժերարը որոշում է գործադրել մի արտասովոր զաղափար: Ինքնաթիռնավորման միջոցով սարսափեցնել քույրերին, մահվան սեմին նրանց հայտնել, որ իր կյանքին վերջ է տալիս, որովհետև նրանք ըջել են իրեն, թողել մեն-մենակ: Իհարկե, ինքը կխմի միայն թեթև դոզայով թույն: Բայց համենայն դեպս կթողնի այն տպավորությունը, թե իրոք ցանկացել է մահանալ: Իրեն, անշուշտ, կփրկեն: Դրանից հետո երեք քույրերն էլ կշրջապատեն իրեն, կջանան իրեն շնորհակցել, վախենալով, որ նորից ինքնասպանություն կգործի: Այդպիսով կվերականգնվի հին օրերի երջանկությունը, կվերահաստատվի իր եղբայրական իշխանությունը:

Բայց ժերարը սխալվում է դեղերի խառնուրդը պատրաստելիս և դրա հետևանքով ստացվում է մահացու թույն: Իր քույրերի ներկայությամբ նա մեռնում է ահավոր տանջանքներով:

Ինչ խոսք, վիպասանը դաժան է վարվել իր հերոսի հետ, նրան դարձրել պատահականության զոհ: Բայց, այնուամենայնիվ, ժերարի ողբերգական ճակատագիրն արդեն վճռված էր հոգեբանական ուրույն հանգամանքների պահանջով: Նրա վախճանի մեջ կարծես ինչ-որ նախասահմանվածություն կար: Այդպիսի բնավորությամբ մարդը պետք է անխուսափելիորեն չքանար վաղ կամ ուշ: Ըստ Թրուայայի՝ ժերարը սարդի էության մարմնավորումն է, որ ձգտում է իր քույրերի առողջ հակումներն արգելակել, կտրել արտաքին աշխարհի հետ նրանց բնական կապերը, իր ոստայնի մեջ գերի պահել նրանց: Որպես մարդկային սարդ, որպես հասարակական շարիք, նա պետք է վերանար այս կամ այն ձևով, թեկուզ պատահական մահով:

Բուրրովին այլաբանությամբ հոգեբանությամբ է ներկայանում Ժակը՝ «Մեռյալը իշխում է ողջին» վեպի գլխավոր հերոսը: Սա ամուսնանում է իր մեռած բարեկամի՝ Ժորժի երիտասարդ կնոջ հետ, յուրացնում հանգուցյալի դրած վեպի ձեռագիրը և այն լույս ընծայում իր անունով: Գիրքը հսկայական հաջողություն է գտնում և արժանանում գրական մրցանակի: Ժակը դառնում է մեծահռչակ: Փարիզի հրատարակչական տներից մեկը պայմանագիր է կնքում նրա հետ, նախօրոք գնելով նրա գրելիք հետագա վեպերը: Այդտեղից էլ սկսվում է իսկական բարդությունը: Ժակի գրած առաջին սեփական վեպը առաջացնում է խոր հիասթափություն: Եվ նա զգում է, որ հաջողության հասնելու համար հարկավոր է յուրացնել մեռած ընկերոջ մտածողությունը:

Որպես ունակիստ արվեստագետ Անրի Թրուալան երբևէ հանդես չի դալիս հեղինակային խոսքով, դնահատականներ չի տալիս իր հերոսների վարքադժին, չի դարձացնում բարոյագիտական տեսություններ։ Հիշյալ վեպերում նա իր հերոսների խոհերն ու ապրումները բացահայտում է նրանց ներքին երկխոսությունների և դատողությունների միջոցով, նրանց արարքները պայմանավորում դեպքերի տրամաբանությամբ։ Բայց ինչքան էլ որ վիպասանը ջանում է մնալ շեղոք արձանագրողի դերում, ինչքան էլ որ նա փորձում է դեպքերը համեմել հումորով, այնուամենայնիվ զգացվում է նրա խորին թախիծը ի տես մարդկային հոգու այլասերման։ Իսկ այդ թախիծը ոչ այլ ինչ է, քան մարդկանց մեջ վսեմ հատկություններ տեսնելու անկեղծ բաղձանքի արտահայտություն, բաղձանք, որով նա համակում է նաև ընթերցողին։

1950-ական թվականներից Անրի Թրուալայի ստեղծագործությունը ձեռք է ընդունում նոր որակ թե՛ բովանդակության և թե՛ ձևի առումով։ Եթե վաղ շրջանի երկերում հեղինակը պատկերել է փոքրաթիվ հերոսների անձնական փոխհարաբերությունները նեղ շահագրգռությունների շրջանում և իր ուշադրությունն առավելապես բեռել է կոնֆլիկտների հոգեբանական կողմի վերլուծության վրա, ապա հետագա մեծակտավ, բազմահատոր վեպերում նա բացահայտել է անհատի և լայն հասարակության հարաբերությունը դասակարգային բախումների ոլորտում։

Ի տարբերություն նախորդ երկերի, Թրուալան իր ստեղծագործության այս երկրորդ շրջանից սկսած արդեն կերտում է դրական գլխավոր հերոսներ, որոնք բարոյական, քաղաքական կամ հասարակական իդեալներով ոգեշնչված՝ հետևողականորեն պայքարում են իրենց զաղափարների կենսագործման համար։ Մյուս կողմից, նա իր բացասական հերոսներին հաճախ հնարավորություն է ընձեռում վերափոխվելու, բարոյապես վերածնվելու, երեւի լույս, որ իսպառ բացակայում է նրա 1930—40-ական թվականների երկերում։

Վիպասանական վարպետության կողմից ևս Թրուալան ապրում է զգալի աճ։ Դրա ցայտուն վկայություններն են պրոբլեմատիկայի հարստացումը, կոմպոզիցիոն ձևերի բազմազանությունը, սյուժետային երկրորդական գծերի մշակումը, կոնֆլիկտների լուծման նոր եղանակները։ Բացի այդ, նրա հերոսների ներաշխարհը դառնում է առավել բազմակողմանի, կերպարների հոգեբանական զարգացումը՝ ավելի համոզիչ, գործողությունների ընթացքը՝ ավելի բնական։ Սակայն գեղարվեստական այս հատկանիշները քիչ կլինեին հաջողության հասնելու համար, եթե հեղինակի գրական ոճը և պատմելաձևի ինքնատիպությունը չբարձրանային որակական նոր մակարդակի։

Ընդլայնելով պատկերած իրականության եզրերը, վիպասանը հանդես է բերում նաև քաղաքական հասուն ըմբռնումներ, սոցիալական կապերի խոր ճանաչողություն, դադափարական ընդհանրացման մեծ ուժ։

Անրի Թրուալայի ծավալուն երկերից մի քանիսն արտացոլում են Ռուսաստանում տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած պատմական անցուդարձերը, իսկ մնացածների նյութը վերցված է ֆրանսիական ժամանակակից կյանքից։

Ֆրանսիական թեմատիկայով գրված վեպերում հեղինակը պատկերում է կապիտալիստական իրավակարգում ապրող ընտանիքի բարոյական քայքայումն այլասերված բարքերի ազդեցությամբ։ Այդ վեպերում ընտանիքի կյանքը ոչ միայն արտացոլման առարկա է, այլև իրականության ներքին հակա-

սուբյուկտների բացահայտման միջոց: Դրա մասին են խոսում մասնավորապես «Սերմնացան և հունձք» ու «Էգլետիկներին ընտանիքը» նշանավոր ստեղծագործությունները:

Մինչդեռ ռուսական կյանքն արտացոլող վեպերում իրադարձությունները տեղի են ունենում ոչ միայն սոցիալական, այլև, մասնավորապես, քաղաքական հողի վրա:

«Արդարների լույսը» վեպը պատկերում է ռուս հեղափոխական շարժումները XIX դ. առաջին քառորդում, դեկաբրիստների ապստամբությունը, նրանց պարտությունը, աքսորը: Գլխավոր հերոսներից են ազնվական հեղափոխականներ Պավել Պեստելը, Ալեքսանդր Մուրավյովը, Բեստուժև-Ռյումինը, Սերգեյ Ապոստոլը, Դավիդովը և ուրիշներ, որոնք, ինչպես հայտնի է, կարևոր դեր են կատարել ապստամբության կազմակերպման մեջ: Վեպը գրելուց առաջ Թրուսյան մանրազնին ուսումնասիրել է տվյալ ժամանակաշրջանի Ռուսաստանի պատմությունը, քաղաքական տարբեր խմբավորումների գաղափարախոսությունը, յուրաքանչյուրի ուրույն գործունեությունը: Նյութ հավաքելու համար նա կարդացել է նաև մի շարք դեկաբրիստների հուշագրությունները, նախահեղափոխական շրջանում գրված ռուսական սիրողություններ ու վեպեր դեկաբրիստական շարժման մասին, սովետական շրջանում հրապարակված բանասիրական աշխատություններ, նամակների ժողովածուներ և այլն:

Անրի Թրուսյան պատմական դեմքերի կողքին ստեղծել է նաև մտացածին հերոսներ, որոնց օգնությամբ ձգտել է հարստացնել վեպի գաղափարական բովանդակությունը: Նկատելի է, որ վեպում ոչ միայն գործողությունները համապատասխանում են պատմական ճշմարտությանը, այլև դեպքերը մեկնաբանված են պատմական ճշգրիտ դիրքերից: Հեղինակը ջերմ համակրանքով է վերաբերվում դեկաբրիստների նկատմամբ և օբյեկտիվորեն պարզաբանում նրանց ձախողման պատճառները:

Իսկ «Ապագայի ժառանգորդները» վեպում պատկերված է 1860-ական թվականների գյուղացիական ռեֆորմի նախապատրաստության շրջանը, ճորտատիրական իրավունքի վերացումը, ժամանակի առաջավոր մտավորականության ու լիբերալ բուրժուազիայի ցուցաբերած աշխուժությունը, հեղափոխական տեռորիստների անձնուրացությունը:

Անրի Թրուսյայի գլուխգործոցներից է «Երկրագնդի տեղումբյան չափ» ընդհանուր վերնագրով մեծակտավ տրիլոգիան, որի վրա նա աշխատել է տասը տարի: Վիպական գործողություններն սկսվում են 1888 թվականին, Արմավիր քաղաքում, ուր առաջին անգամ հանդիպում ենք Միշել Դանովին, որը անձնավորում է հեղինակի հորը՝ Ասլան Թարասովին: Ի դեպ, Կուրանում հայերի հաստատման, նրանց ու չերքեզների փոխհարաբերության, Արմավիր քաղաքի հիմնադրման, հայկական բարքերի, կրոնական ծիսակատարությունների և այլ մանրամասների վերաբերյալ տեղեկություններ Անրի Թրուսյան մեծ մասամբ քաղել է ակադեմիկոս Ֆ. Ա. Շչերբինայի «Արմավիրի և չերքեզահայոց պատմությունը» վերնագրով աշխատությունից:

Հանձին Միշելի և նրա ընտանիքի, հեղինակը մշակել է հայկական ուրույն մի թեմատիկա, այն միահյուսելով վիպական գործողություններին: Ամուսնական կապերի միջոցով բազմանում են գործող անձինք, ճյուղավորվում են սյուլեթետային գծերը: Հերոսների կյանքը հաջորդաբար անցնում է քաղաքական կարևոր դեպքերի բովով. ռուս-ճապոնական պատերազմը, առաջին աշխարհա-

մարար, և ապա Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը, որը պատկերված է ծավալուն կտավի վրա:

«Երկրագնդի տեղություն չափ» վեպում Թրուայան հարստացրել է տիպականացման իր արվեստը՝ հերոսների գաղափարական տեսանկյունը զուգակցելով հոգեբանական երանգավորման հետ: Վիպական գործողությունների հիմքում գնելով Ռուսաստանի պատմության ամենադրամատիկական ժամանակաշրջաններից մեկի քաղաքական իրադարձությունները, հեղինակը փորձել է պատկերել բոլշևիկյան կուսակցության պայքարը՝ սոցիալիստական պետություն ստեղծելու ուղղությամբ: Հիշյալ իրադարձությունների կենտրոնում նա դրել է հնի և նորի գոտեմարտում հանդես եկող հերոսներին, որոնք դիտված են հասարակական շարժումների և քաղաքական անցուղարձների բազմակողմանի փոխհարաբերության մեջ:

Լացի Միշելից ու նրա ընտանիքից, վեպում առաջին պլան են մղված Վոլոդյա Ռուրինը, Իվան Կիսյակովը, Մալինովը, Զագուլյանը, Նիկոլայ և Ակիմ Սրապովները և ուրիշներ: Այս հերոսների գործունեությունները ընթանում են սյուժետային տարրեր ուղղություններով, բայց, այնուամենայնիվ, նրանց կյանքերը երբեմն խաչաձևվում են՝ ներգործելով միմյանց բնավորության ու վարքագծի վրա: Վերոհիշյալներից ոմանք հեղափոխականներ են, ոմանք՝ ցարական ռեժիմի պաշտպաններ, ոմանք էլ հավատում են սահմանադրական միապետության արդյունավետությանը: Նրանցից յուրաքանչյուրը հավատում է իր քաղաքական հավատամքի իրավացիությանը և յուրաքանչյուրն իր նպատակի հաղթանակման համար պայքարում է յուրովի:

«Երկրագնդի տեղություն չափ» վեպը նշանավորում է Անրի Թրուայայի խոր ռեալիզմի միաձուլումը սոցիալական պրոբլեմատիկային: Լինելով բազմամյա աշխատանքի արդյունք և պարունակելով գրական վիթխարի փորձ, այդ վեպը հեղինակի ստեղծագործական բոլոր հատկանիշները խտացնող մի դիրք է:

Բացի վեպերից, Թրուայան հրատարակել է նաև պատմվածքների ժողովածուներ, ճանապարհորդական հուշեր և դրամաներ: Բայց նրա ստեղծագործության մեջ առանձնապես աչքի են ընկնում Պուշկինի, Լեմոնտովի, Գոգոլի, Դոստոևսկու, Տոլստոյի ու Չեխովի վերաբերյալ հմտալից ուսումնասիրությունները, որոնք արժանացել են Արևմուտքի գրական հասարակայնության բարձր գնահատանքին: Այդ ուսումնասիրություններն արժեքավոր են հատկապես նրանով, որ հաճախ պարունակում են նորահայտ և զգալացունց փաստեր հիշյալ գրողների կենսագրության մասին: Օրինակ, Պուշկինին նվիրված աշխատության մեջ Թրուայան անտիպ փաստաթղթերի վկայությամբ ապացուցում է նրա կնոջ՝ Նատալյայի անմեղությունն ու հավատարմությունը: Այդ փաստաթղթերը Պուշկինին սպանող ժորժ դ'Անթեսի նամակներն են, գաղտնի պահված ու խուճապած էջեր, որ հիշյալի ծոռը՝ բարոն Հեքերեն դ'Անթեսը բարեհաճել է առաջին անգամ ցույց տալ Անրի Թրուայային:

Ռուսական թեմաներով գրված վեպերն ու բանասիրական աշխատություններն իրենց ծավալով կազմում են հեղինակի ամբողջ ստեղծագործության ավելի քան կեսը: Մեծահույս գրողի երկերը աշխույժ հետաքրքրություն են արթնացնում սովետական ընթերցող հասարակության մեջ:

НАБИВНЫЕ ЗАВЕСЫ В ЭЧМИАДЗИНСКОМ СОБРАНИИ

ЗЕПЮР ТАРАЯН

Армянские алтарные завесы в соборном Эчмиадзинском католикосате представляют поздние образцы армянской набойки, относясь в большинстве своем к XVIII в.

Однако армянская церковь относится к числу тех, которые еще в раннем христианстве разработали виды церковной утвари. Есть намек на это в армянской легенде о создании Спаса Нерукотворного.

Посланные к Христу армянским царем Абгаром, правящим Эдессой (6 г. до н. э.—34 г. н. э.), шелкоделы Аддей и Ананей (глава рода Анакуни) попросили у Христа его портрет, чтобы доставить его царю. «Он (Христос) приказал ученикам: «Рисуйте подобие Моего образа». Те, достав красок, нарисовали на бумаге»¹. По легенде портрет получился неудачным, и тогда Христос утерся платком и, оставив на нем нерукотворный образ свой, послал Абгару².

Примечательно, что среди посланцев к Христу упоминается шелкодел, и первый образ Христа был воспроизведен на ткани. Это в какой-то мере прообраз завес, заведывающих алтари.

Весьма существенным свидетельством о раннем использовании в Армении алтарных завес с религиозными изображениями является речь апологета раннеармянского христианства Вртанеса Кертюха. Согласно ей, в VII—VIII вв. изображения лиц священной истории для армянской церкви не были редкостью и составляли уже определенную схему, чего еще не могло представить большинство других церквей. Алтарным завесам в этой схеме с циклом житейских сцен Вртанес Кертюх отводит особое место: «... նկարքն յեկեղեցիս զոր գիրք սուրբ պատմեն. ո՛չ ապաքէն գեղով գրեալ է գգիրս. զնոյն բան գեղով նկարեալ է յեկեղեցիս, ի որոցն ականջք մտացն լսեն, իսկ զնկարսն աչօք տեսանեն և ականջօք լսեն... ահա յայտ է շիցէ արտաքոյ գրոց պաշտել զպատկերսն: Նոյնպէս զվարագոյրն զոր տէր ասաց առնել նարոտով նկարովք և պէս-պէս յորինուածովք զարդարեալ, որ է բեհեզ և ծիրանի և կապուտով. ոչ ապաքէն գեղք էին երանգք նկարոց վարագուրին և էին նկարք վարագուրին քերովրէք»³.

Использование алтарных завес сохранила в основном армянская литургическая драма, хотя в эпоху становления христианского ритуала они были принадлежностью всех церквей. Их раннее название «катапетасма» (завеса) происходит из греческого словаря.

¹ Н. Я. Марр, Хитон господень, СПб., 1897, стр. 89—90.

² Там же, стр. 89—90.

³ ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (Մատենադարան), ձեռ. № 2966, էջ 18ա.